

Կ Ա Ր Ծ Ի Ք

Եղիշե Իշխանի Բազոյանի՝ «Պառամենտական վերահսկողության էությունը և ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով
ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար
ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Եղիշե Իշխանի Բազոյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական դատավարության առանձնահատկությունների բացահայտմանը և համակողմանի վերլուծությանը:

Ատենախոսության հեղինակի կարծիքով պառամենտական վերահսկողության ուժեղացմանը վերաբերող հիմնախնդիրների արդիականությունը պայմանավորված է երկրում պետական իշխանության օրենսդիր մարմնի դերի բարձրացման, իշխանությունների տարանջատման սկզբունքի իրականացումն ապահովող գործումների և հակակշիռների ճկուն համակարգի ներդրման անհրաժեշտությամբ: Այդ բնագավառում տեսա-իրավական հետազոտությունների ակնհայտ անբավարարությունը թելադրում է նրա կատարելագործման առավել արդյունավետ և ռացիոնալ ճանապարհների որոնման անհրաժեշտությունը: Այս կապակցությամբ ատենախոսության մեջ փաստարկված և ճշմարիտ եզրակացություններով հիմնավորվում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկողական գործունեության նորմատիվ իրավական կարգավորման հիմքերի վերլուծության և փաստացի ձևավորված պրակտիկայի արդյունքների հաշվառմամբ անհրաժեշտ է ըստ ամենայնի մեծացնել, ընդլայնել և ուժեղացնել գործադրի իշխանության նկատմամբ իրականացվող վերահսկողական լիազորությունները տարածելով դրանք նաև պետության գլխի, բոլոր տեսակի հատուկ ծառայությունների, ուժային կառուցների, կենտրոնական դրամատան նկատմամբ:

Ատենախոսության հեղինակին հաջողվել է համոզիչ փաստարկներով ցույց տալ քննարկվող թեմայի արդիականությունը՝ առանձնացնելով հետազոտվող հիմնախնդրի առավել իրատապ հարցադրումները և առաջադրելով դրանց առնչությամբ իր հիմնավորած տեսակետները:

Ատենախոսության մեջ քննարկվող հիմնահարցերի վերլուծության անհրաժեշտությունը, արդիականությունը և կարևորությունը հայկական իրավագիտության շրջանակներում հեղինակի կողմից միանգամայն ճիշտ հիմնավորվում են սահմանադրական մակարդակով իշխանության թևերի միջև փոխհարաբերությունների այնպիսի խելամիտներդաշնակություն ապահովելու անհրաժեշտությունը՝ ճշգրտելով իշխանության յուրաքանչյուր թևի գործառնական, հակակշռող և զսպող լիազորությունների շրջանակները, որպեսզի ապահովվի դրանցից յուրաքանչյուրի հարաբերականորեն անկախ և ինքնուրույն գործունեությունն օրենքի գերակայության պայմաններում՝ կառավարման ոլորտում հայտնաբերվող օրինախախտումների վերացման, գործադիր իշխանությունը հասարակության առջև լիարժեք հաշվետու և պատասխանատու դարձնելու նպատակով:

Ատենախոսության մեջ առաջադրված եզրահանգումները պարզ են և հստակ:

Գտնում ենք, որ նյութի շարադրանքի և հատկապես պաշտպանությանն առաջադրվող եզրահանգումների համակարգված ներկայացմանը մեծ չափով նպաստել է ատենախոսության կառուցվածքը. մասնավորապես հեղինակը հարցերն ընտրել է այնպիսի տրամաբանական հերթականությամբ, ինչը հնարավորություն է տվել քննարկելու, նախ, թեմային առնչվող ելակետային նշանակություն ունեցող հարցադրումների վերաբերյալ տեսական-համեմատական հիմքը, ապա անցնելու կոնկրետ ամփոփումների ու ընդհանրացումների, այնուհետև, արդեն իսկ ներկայացված նյութի հիման վրա շարադրելու ատենախոսության եզրահանգումները և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքն ունի տրամաբանական կառուցվածք: Բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրահանգումներից և օգտագործված գրականության ցանկից:

Գտնում ենք, որ ատենախոսությունը կատարված է գիտական ընդունելի մակարդակով, որի հիմնական դրույթներն արտացոլված են գիտական հանդեսներում հրատարակված հոդվածներում:

Աշխատանքում ներկայացված են թեմային առնչվող վիճակագրական արժեքավոր տվյալներ և դրանց հիման վրա կատարված համեմատական վերլուծություններ, որոնց արդյունքում ատենախոսը մշակել է տեսական հետևողայուններ ու

գործնական բնույթի առաջարկություններ, որոնք աշխատանքը դարձնում են առավել համոզիչ և արժեքավոր:

Ատենախոսությունում առանձին գիտագործնական նշանակություն ունեցող եզրահանգումներ հիմնավորված են ոչ միայն տեսական վերլուծություններով, այլև կոնկրետ իրավակիրառ գործունեության վերաբերյալ տվյալներով:

Համոզված կարելի է ամրագրել, որ ատենախոսությունը նկարագրական բնույթի չէ, այն առանձնանում է, որպես վերլուծական գիտական աշխատություն: Հեղինակի կողմից պաշտպանության ներկայացված եզրահանգումներն առանձնանում են ինքնատիպությամբ, ընդհանուր առմամբ, հեղինակը դրսենորել է թեմային առնչվող սուր հարցադրումները համակողմանի քննարկման առարկա դարձնելու և դրանց առնչությամբ ինքնուրույն եզրակացություններ անելու ունակություն:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարելի է ասել, որ ատենախոսությունում պատշաճ խորությամբ և բազմակողմանիորեն ուսումնասիրվել և վերլուծվել են առաջադրված հարցերը, արվել են հիմնավորված հետևողական առնչություններ: Ընդհանուր առմամբ հեղինակը հասել է իր առջև դրված հետազոտական նպատակներին:

Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում ստորև ներկայացնել որոշ նկատառումներ, որոնք անմիջականորեն առնչվում են ատենախոսության թեմայի առանձին հարցադրումներին:

1. Հանրապետության նախագահի նկատմամբ պաղամենտական վերահսկողության հնարավորություն ամրագրելու, միաժամանակ վարչապետի լիազորությունները նախագահին փոխանցելու պարագայում արդյո՞ք չի առաջանա անաշառ և բացառապես համապետական և համազգային շահերով առաջնորդվելու սահմանադրական կարգավիճակի խափարում: Նպատակահարմար կլիներ հեղինակի կողմից առավել մանրամասն անդրադարձ կատարվեր Հանրապետության նախագահի կարգավիճակի փոփոխության բոլոր հարցերին՝ ներառյալ քաղաքական պատասխանատվության հարցին:

2. Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներից 4-րդ դրույթի առնչությամբ, կարծում եմ, նպատակահարմար կլիներ ատենախոսության շրջանակներում առավել մանրամասն քննարկման առարկա դարձնել կառավարող մեծամասնության և ընդդիմադիր խմբակցությունների միջև քաղաքական

ճգնաժամեր առաջանալու հնարավորություններին և դրանց հաղթահարման ուղիներին նվիրված հարցերը:

Նշված նկատառումները, սակայն, չեն նսեմացնում ատենախոսության ակնառու արժանիքները: Դրանք առավելապես ցանկություններ են, որոնք, հուսով ենք, հեղինակը հաշվի կառնի հիմնահարցի հետագա ուսումնասիրության ընթացքում:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ Եղիշե Իշխանի Բազոյանի՝ «Պաղամենտական վերահսկողության էությունը և ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը պատշաճ գիտական մակարդակի է, համապատասխանում է ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությանը, բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

«Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական, ի.գ.թ.՝

ՍԱՄՎԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Սամվել Առաքելյանի ստորագրությունը հաստատում եմ,
Սահմանադրական դատարանի
աշխատակազմի ղեկավար՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

04.11.2025թ

